



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2007թ. նոյեմբերին /վերլուծություն/

2007թ. նոյեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 14970 գործարքներ, որոնց քանակը 2006թ. նոյեմբերի համեմատ աճել է 36.0%-ով, իսկ 2007թ. հոկտեմբերի համեմատ նվազել՝ 6.3%-ով:

2007թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5805 օտարման գործարքների 87.2% կազմել են առուվաճառքները, 11.9%՝ նվիրատվությունները և 0.9%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 34.9%

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 31.1% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2007թ. նոյեմբերին, 2007թ. հոկտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 3.9%-ով, իսկ 2006թ. նոյեմբերի համեմատ աճել՝ 26.9%-ով:

2007թ. նոյեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 55.1% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2007թ. հոկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 4.4%-ով, իսկ 2006թ. նոյեմբերի համեմատ նվազել՝ 1.5%-ով:

2007թ. նոյեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	նոյեմբեր 2006թ.	նոյեմբեր 2007թ.	հոկտեմբեր 2007թ.
Կենտրոն	401500	473100	465500
Արաբկիր	321900	377500	377300
Քանաքեռ-Զեյթուն	218300	295000	282900
Նոր-Նորք	187300	251300	245000
Ավան	180100	250800	243700
Էրեբունի	194500	250500	243900
Շենգավիթ	202000	261700	259500
Դավթաշեն	205500	274600	274400
Աջափնյակ	192600	257100	256000
Մալաթիա-Սեբաստիա	182300	250000	246400
Նուբարաշեն	117600	137500	133200
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	218600	279900	275300

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. նոյեմբերին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. հոկտեմբերի համեմատ աճել են 1.7%-ով:

2007թ. նոյեմբերին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 526 բնակարաններ, որոնց քանակը 2007թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 1.9%-ով, իսկ 2006թ. նոյեմբերի համեմատ աճել՝ 5.4%-ով:

2007թ. նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		նոյեմբեր 2006թ.	նոյեմբեր 2007թ.	հոկտեմբեր 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	80000	111200	111000

	Ապարան	26600	30800	30300
	Թալին	29300	40300	40200
Արարատ	Արտաշատ	63300	89900	89800
	Մասիս	73600	112400	107500
	Վեդի	49400	71300	68300
	Արարատ	50400	57900	57800
Արմավիր	Վաղարշապատ	101600	142900	139100
	Արմավիր	70200	108700	104700
	Մեծամոր	46200	66300	66100
Գեղարքունիք	Սևան	46900	73300	70500
	Գավառ	30600	39400	37900
	Մարտունի	42700	59000	56900
	Վարդենիս	23200	28300	27500
	Ճամբարակ	13900	15500	15400
Լոռի	Վանաձոր	58900	77800	77400
	Ստեփանավան	28700	42000	41200
	Սյիսակ	40300	55000	52500
	Ալավերդի	23300	27600	27500
	Տաշիր	21800	28900	27900
	Թումանյան	5400	5500	5500
	Շամլուղ	3000	3200	3200
	Ախթալա	10900	12600	12200
Կոտայք	Աբովյան	118000	151600	151100
	Նոր Հաճն	80300	111800	111600
	Բյուրեղավան	57400	82200	80200
	Եղվարդ	72700	105700	101600
	Հրազդան	42900	58000	55900
	Ծաղկաձոր	80600	110000	105600
	Չարենցավան	51400	71800	69200
Շիրակ	Գյումրի	58200	81800	79400
	Արթիկ	37700	48600	48500
	Մարալիկ	23800	25800	25700
Սյունիք	Գորիս	56300	82500	78800
	Կապան	55100	72600	70800
	Սիսիան	47400	57900	57700
	Մեղրի	35300	42800	40900
	Ագարակ	21900	27500	26700
	Քաջարան	29700	39000	38900
	Դաստակերտ	6800	7000	7000
Վայոց Ձոր	Վայք	51600	69200	66300
	Եղեգնաձոր	63400	87300	84100
	Զերմուկ	78400	114900	114800
Տավուշ	Դիլիջան	56500	75900	75400
	Իջևան	67900	101900	98300
	Բերդ	31400	36200	35200
	Նոյեմբերյան	24300	29000	28900
	Այրում	18000	21000	21000

2007թ. նոյեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. հոկտեմբերի համեմատ աճել են 2.3%-ով:

2007թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 663 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 166, մյուս մարզերում միասին վերցրած՝ 497: 2007թ. հոկտեմբերի համեմատ անհատական

բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 6.8%-ով, ընդ որում Երևանում՝ 18.6%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 2.0%-ով: 2006թ. նոյեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 32.6%-ով, ընդ որում Երևանում՝ 46.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 28.4%-ով:

2007թ. նոյեմբերին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	նոյեմբեր 2006թ.	նոյեմբեր 2007թ.	հոկտեմբեր 2007թ.
Կենտրոն	402600	476700	472700
Արաբկիր	323000	391000	390800
Քանաքեռ-Զեյթուն	219400	297500	287700
Նորք-Մարաշ	193900	248100	245400
Ավան	181200	254000	246200
Էրեբունի	195600	252900	249600
Շենգավիթ	203000	264400	261800
Դավթաշեն	206700	279100	277600
Աջափնյակ	193800	262100	259300
Մալաթիա-Մեքաստիա	183300	254600	249000
Նուբարաշեն	118600	138700	133900
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	220100	283600	279500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. նոյեմբերին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. հոկտեմբերի համեմատ աճել են 1.5 %-ով:

2007թ. նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		նոյեմբեր 2006թ.	նոյեմբեր 2007թ.	հոկտեմբեր 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	81200	116300	116100
	Ապարան	27900	33700	33500
	Թալին	30400	43100	42800
Արարատ	Արտաշատ	64900	95600	95000
	Մասիս	74700	115000	110500
	Վեդի	50900	73000	69500
	Արարատ	51700	63100	63000
Արմավիր	Վաղարշապատ	103000	145100	140600
	Արմավիր	71200	110800	106000

Գեղարքունիք	Սևան	47900	74800	71500
	Գավառ	31800	40900	40100
	Մարտունի	43900	60600	58000
	Վարդենիս	24400	30800	30700
	Ճամբարակ	14900	18800	18700
Լոռի	Վանաձոր	60100	84500	83900
	Ստեփանավան	29900	46400	44900
	Սպիտակ	41600	56900	53800
	Ալավերդի	24500	30200	30000
	Տաշիր	23200	30200	29400
	Թումանյան	7200	8700	8700
	Շամլուղ	4600	5800	5700
	Ախթալա	12500	15100	15100
Կոտայք	Արմավյան	119500	158700	157600
	Նոր Հաճն	81700	116600	115300
	Բյուրեղավան	58500	83700	81400
	Եղվարդ	73900	108100	103900
	Հրազդան	43900	61300	59700
	Ծաղկաձոր	86400	171700	162400
	Չարենցավան	52500	73500	71400
Շիրակ	Գյումրի	59200	87200	84200
	Արթիկ	38800	51000	50800
	Մարալիկ	24800	29000	28900
Սյունիք	Գորիս	57500	84600	81800
	Կապան	56200	76300	76000
	Միսիան	48600	60700	59700
	Մեղրի	36400	45100	43700
	Ագարակ	23400	28800	28300
	Դաստակերտ	8900	9800	9800
Վայոց Ձոր	Վայք	53000	70600	67900
	Եղեգնաձոր	64900	89700	86200
	Ջերմուկ	40500	64000	62400
Տավուշ	Դիլիջան	57500	80800	79100
	Իջևան	69000	103900	100900
	Բերդ	32400	38900	38700
	Նոյեմբերյան	25700	34600	34500
	Այրում	19200	22800	22800

2007թ. նոյեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. հոկտեմբերի համեմատ աճել են 2.6%-ով:

Ընդհանուր առմամբ, 2007թ. նոյեմբերին հանրապետությունում օտարվել են 2381 միավոր /1385.97 հա/ հողեր, որից Երևանում՝ 193 միավոր /21.56 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 78 միավոր /3.82 հա/ հողեր, որից Երևանում՝ 26 միավոր /1.12 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 995 միավոր /1237.36 հա/, որից Երևանում՝ 12 միավոր /1.64 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 952 միավոր /84.53 հա/, որից Երևանում՝ 141 միավոր /12.35 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 386 միավոր /34.12 հա/, որից Երևանում՝ 38 միավոր /7.34 հա/,

- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 29 միավոր /18.06 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.23 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 15 միավոր /10.67 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր 3 միավոր /0.23 հա/,
- անտառային հողեր՝ 1 միավոր վարձակալության իրավունքի վաճառք /1.00 հա/:

2007թ. նոյեմբերին հանրապետությունում օտարված հողերից 2281 միավորի /1335.64 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 187 միավոր /20.78 հա/, նվիրատվության գործարքներ՝ 90 միավորի /49.95 հա/, որից Երևանում՝ 4 միավոր /0.69 հա/ և փոխանակության գործարքներ՝ 10 միավորի /0.39 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.09 հա/:

Հանրապետությունում 2007թ. նոյեմբերին, 2006թ. նոյեմբերի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 32.0%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 28.9%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել՝ 39.1%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 3.6%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 379.92 հա, որից 366.01 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 34.8% կամ 793 գործարքներ /719.19 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 57 գործարքներ /8.00 հա/, իսկ 64.7% կամ 1476 միավորը /609.37 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 127 միավոր /12.64 հա/: 2007թ. նոյեմբերին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 12 գործարք /7.08 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքներ:

Ստորև ներկայացվում է 2007թ. նոյեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

ՄԱՐԶԻ ԱՎԱՆՈՒՄԸ	<i>Չետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	2	0.23	39	4.05	16	3.73	11	1.13	0	0.00	98	8.04	18	3.47
Արագածոտն	75	192.65	0	0.00	6	1.05	36	2.88	71	78.00	0	0.00	55	5.23	2	0.49
Արարատ	14	30.47	5	1.31	43	3.76	22	0.38	77	39.02	0	0.00	98	8.56	5	1.13
Արմավիր	43	211.99	5	0.16	9	0.41	27	1.06	215	154.02	0	0.00	206	12.00	9	0.28
Գեղարքունիք	14	56.06	1	0.30	33	1.94	12	0.72	37	32.32	0	0.00	14	2.11	3	0.01
Լոռի	3	3.70	3	0.45	3	0.29	11	0.36	41	52.31	1	0.01	12	0.95	6	0.12
Կոտայք	80	148.85	3	0.24	8	0.71	60	6.72	160	123.87	1	0.03	169	15.03	25	2.13

Շիրակ	2	2.80	4	0.25	33	8.28	17	0.44	12	11.22	0	0.00	11	1.43	5	0.78
Սյունիք	2	1.00	1	0.07	6	0.33	48	0.31	17	17.97	2	15.00	4	0.53	7	0.12
Վայոց Ձոր	9	15.88	0	0.00	4	0.24	32	1.35	11	4.37	0	0.00	10	1.43	0	0.00
Տավուշ	5	2.12	1	0.01	26	2.18	19	5.38	43	11.06	0	0.00	19	2.23	0	0.00
Ընդամենը	247	665.52	25	3.02	210	23.24	300	23.33	695	525.29	4	15.04	696	57.54	80	8.53

Ստորև ներկայացվում է 2007թ. նոյեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	18	2.16	1	0.10	8	1.38	9	0.68	39	5.83	0	0.00	1	0.13	31	2.66	7	3.04
Արագածոտն	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	113	151.58	72	147.65	0	0.00	6	1.05	35	2.88
Արարատ	7	0.39	1	0.35	1	0.002	5	0.04	77	35.52	14	30.47	4	0.96	42	3.76	17	0.33
Արմավիր	10	0.05	1	0.003	3	0.02	6	0.03	74	213.57	43	211.99	4	0.16	6	0.39	21	1.03
Գեղարքունիք	3	0.03	0	0.00	0	0.00	3	0.03	57	58.99	14	56.06	1	0.30	33	1.94	9	0.69
Լոռի	2	0.09	0	0.00	1	0.06	1	0.03	18	4.71	3	3.70	3	0.45	2	0.23	10	0.33
Կոտայք	16	0.70	1	0.06	2	0.16	13	0.48	135	155.82	80	148.85	2	0.18	6	0.55	47	6.24
Շիրակ	10	0.43	0	0.00	5	0.16	5	0.27	46	11.34	2	2.80	4	0.25	28	8.12	12	0.17
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	57	1.71	2	1.00	1	0.07	6	0.33	48	0.31
Վայոց Ձոր	6	0.56	0	0.00	0	0.00	6	0.56	39	16.91	9	15.88	0	0.00	4	0.24	26	0.79
Տավուշ	13	0.46	0	0.00	5	0.39	8	0.07	37	9.18	4	2.05	1	0.01	21	1.80	11	5.32
Ընդամենը	86	4.87	4	0.51	25	2.17	57	2.19	692	665.16	243	620.45	21	2.51	185	21.07	243	21.13

Հանրապետությունում 2007թ. նոյեմբերին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 4 գործարք /45.07 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2007թ. նոյեմբերին 2006թ. նոյեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 17.1%-ով: Ընդ որում Երևանում աճել է 9.8 անգամ, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 11.3%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 11.0%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել՝ 13.5%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել՝ 35.8%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 2.6 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. նոյեմբերին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների				Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների			
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	49	45.38	37.5	907.1	290.3	47	37.03	362.2	6772.5	2874.9
Ապարան	14	84.67	38.8	277.9	157.0	2	2.03	90.6	767.6	386.3
Թալին	9	17.60	34.2	125.5	52.4	21	38.64	90.6	758.5	415.4
Ծաղկահովիտ						1	0.30	77.0	948.2	180.6
Արարատի մարզ										
Արտաշատ	3	15.02	129.1	506.3	255.1	34	10.89	335.1	5418.0	1549.4
Մասիս	7	14.30	32.6	700.0	473.8	10	10.92	181.1	6772.5	1970.2
Վեդի	4	1.15	190.0	1500.0	1003.4	30	12.29	203.8	4515.0	1331.2
Արմավիրի մարզ										
Արմավիր	11	7.26	521.1	1598.6	623.6	55	37.44	294.3	4063.5	987.6
Բաղրամյան	19	184.03	33.8	797.5	191.4	15	37.69	90.6	677.3	603.0
Վաղարշապատ	13	20.70	19.2	1235.3	354.4	141	76.82	443.7	9030.0	1699.1
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						19	8.38	190.2	496.7	381.5
Ճամբարակ	5	12.09	108.0	664.7	253.2	3	0.58	45.3	541.8	159.1
Մարտունի								45.3	1806.0	480.0
Սևան	7	41.95	104.3	3515.4	661.2	4	8.11	45.3	451.5	204.5
Վարդենիս	2	2.02	459.9	459.9	459.9	11	15.26	27.2	532.8	262.2
Լոռու մարզ										
Այվերդի	3	3.70	232.0	2971.5	1164.1	3	2.23	163.0	2483.3	1128.0
Գուգարք						2	2.69	226.4	2709.0	965.4
Սպիտակ						2	1.17	226.4	1490.0	529.5
Ստեփանավան						21	16.60	90.6	2257.5	383.9
Տաշիր						13	29.61	45.3	451.5	211.6
Կոտայքի մարզ										
Աբովյան	42	63.56	34.8	2062.0	459.1	56	25.21	271.7	11287.5	3602.5
Եղվարդ	17	46.36	71.3	605.1	311.5	90	85.54	172.1	11287.5	2533.1
Հրազդան	21	38.93	29.0	827.9	282.3	14	13.12	113.2	2709.0	1006.1
Շիրակի մարզ										
Ախուրյան						1	0.83	249.0	1693.1	462.5
Ամասիա								36.2	237.0	118.2
Անի						5	5.92	108.7	361.2	253.3
Աշոցք						2	1.93	45.3	165.0	118.5
Արթիկ	2	2.80	128.9	269.1	199.0	4	2.53	63.4	1083.6	180.8
Սյունիքի մարզ										
Գորիս								90.6	673.3	348.6
Կապան	1	0.50	119.3	119.3	119.3	1	0.17	54.3	841.6	234.2
Մեղրի						6	2.36	181.1	1784.2	509.7
Սիսիան	1	0.50	260.0	260.0	260.0	10	15.44	45.3	631.2	242.9
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	9	15.88	34.4	173.3	85.3	11	4.37	117.7	2524.8	1319.3
Վայք								54.3	1430.7	521.3
Տավուշի մարզ										
Բերդ	2	1.40	361.6	519.8	440.7	25	5.37	45.3	841.6	364.3
Իջևան	2	0.65	275.0	402.9	339.0	5	0.86	240.0	1683.2	833.7
Նոյեմբերյան						13	4.83	45.3	3509.5	555.8

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. նոյեմբերին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մտավերագույն	Միջին			Նվազագույն	Մտավերագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	2	2000.0	179.0	179.0	179.0	47	41216.0	113.2	3612.0	2338.6
Ապարան						4	7020.0	113.2	632.1	204.1
Թալին	4	8510.0	49.0	75.7	57.8	2	2251.0	45.3	361.2	100.1
Ծաղկահովիտ								45.3	361.2	69.8
Արարատի մարզ										
Արտաշատ	27	26950.0	115.3	271.5	259.6	26	28002.0	135.8	2709.0	904.7
Մասիս	10	7818.0	289.0	1034.9	601.3	46	30680.0	135.8	9030.0	1172.2
Վեդի	5	2804.0	413.3	855.8	642.0	25	26479.0	113.2	993.3	654.8
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	1125.0	1980.0	1980.0	1980.0	25	23774.0	135.8	2257.5	1135.5
Բաղրամյան						4	5240.0	81.5	270.9	138.2
Վաղարշապատ	5	2732.0	3828.0	3828.0	3828.0	175	88329.0	135.8	4515.0	1477.7
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						1	1190.0	135.8	903.0	362.6
Ճամբարակ								45.3	135.5	99.8
Մարտունի	32	17883.0	79.9	113.5	112.2	6	8970.0	90.6	451.5	248.8
Սևան	1	1500.0	188.1	188.1	188.1	3	3940.0	90.6	903.0	159.2
Վարդենիս						4	6973.0	45.3	225.8	115.8
Լոռու մարզ										
Ալվերդի						1	650.0	67.9	270.9	131.2
Գուգարք						8	6933.0	67.9	2347.8	562.4
Սպիտակ	2	2300.0	92.0	94.6	93.3	1	610.0	63.4	451.5	129.3
Ստեփանավան						2	1300.0	45.3	270.9	108.1
Տաշիր								45.3	135.5	68.1
Կոտայքի մարզ										
Աբովյան						88	80334.0	135.8	6772.5	1832.2
Եղվարդ	2	1500.0	1481.3	1482.9	1482.1	66	56222.0	135.8	6772.5	1958.6
Հրազդան	4	4000.0	393.0	403.0	395.5	14	12710.0	135.8	9030.0	1268.4
Շիրակի մարզ										
Ախուրյան	18	75857.7	277.2	4444.4	1406.3	5	4420.0	113.2	1535.1	328.5
Ամասիա								45.3	135.5	68.5
Անի						1	446.0	67.9	180.6	98.6
Աշոցք						3	8600.0	40.8	135.5	58.1
Արթիկ	10	5366.0	24.3	859.0	324.6	2	800.0	67.9	925.6	167.8
Սյունիքի մարզ										
Գորիս						1	600.0	67.9	541.8	238.2
Կապան	6	3300.0	55.2	540.0	281.3	1	3062.0	67.9	632.1	203.1
Մեղրի						1	560.0	67.9	406.4	120.8
Միսիան						1	1070.0	67.9	406.4	139.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	4	2400.0	116.0	686.3	421.3	8	10600.0	67.9	1128.8	301.2

Վայք						1	1500.0	77.0	632.1	120.1
Տավուշի մարզ										
Բերդ								45.3	632.1	85.8
Իջևան	17	14316.0	76.0	1495.0	1199.1	17	19632.0	67.9	1354.5	423.4
Նոյեմբերյան	4	3640.0	69.0	446.5	352.1	2	2680.0	45.3	632.1	133.5

2007թ. նոյեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 2 գործարքներ /0.10 հա մակերեսով/ Գեղարքունիքի մարզերում:

2007թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 956 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.4%: Ընդ որում, վարձակալության գործարքների 42.7% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2007թ. նոյեմբերին 2007թ. հոկտեմբերի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 15.9%-ով, իսկ 2006թ. նոյեմբերի համեմատ աճել՝ 28.2%-ով:

2007թ. նոյեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 69 բնակարանների, 36 անհատական բնակելի տների, 334 հասարակական, 42 արտադրական նշանակության օբյեկտների, 468 միավոր /1763.63 հա/ հողերի և 7 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2007թ. նոյեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 74 վարձակալության գործարքների /այդ թվում 11 միավոր /0.02 հա/ կառուցապատման իրավունքով/ քանակը 2007թ. հոկտեմբերի համեմատ աճել է 37.0%-ով, իսկ 2006թ. նոյեմբերի համեմատ՝ 25.4%-ով:

2007թ. նոյեմբերին հանրապետությունում վարձակալված 1763.63 հա հողերից 37.49 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1726.14 հա հողերի 9.35 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 0.10 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկային օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 610.31 հա, որից 572.26 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 466.10 հա հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2007թ. նոյեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	1	100.00	10	37.84
Արարատ	1	25.00	23	92.78
Արմավիր	1	10.00	44	107.42
Գեղարքունիք	9	321.10	39	251.16
Լոռի	0	0.00	14	51.22
Վոտայք	1	10.00	15	40.83

Շիրակ	0	0.00	57	95.28
Սյունիք	0	0.00	4	43.04
Վայոց Ձոր	0	0.00	16	460.84
Տավուշ	0	0.00	9	2.85
Ընդամենը	13	466.10	231	1183.26

2007թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2248 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 15.0%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 15.3%-ով, իսկ 2006թ. նոյեմբերի համեմատ աճել՝ 60.2%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /45.6%/, առանձնատների /24.3%/, հասարակական նշանակության օբյեկտների /9.7%/ և հողերի /16.3%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 931 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. նոյեմբերի համեմատ նվազել է 9.2%-ով, իսկ 2006թ. նոյեմբերի համեմատ աճել՝ 55.4%-ով:

2007թ. նոյեմբերին հանրապետությունում գրավադրվել են 391.23 հա հողեր, որից 11.75 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 94.8% կամ 370.83 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից 0.10 հա՝ Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում՝ 153.92 հա, որից 152.31 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2007թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 4 և 6 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.07%: 2007թ. հոկտեմբերի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը աճել է 66.7%-ով, իսկ 2006թ. նոյեմբերի համեմատ նվազել՝ 47.4%-ով: 2007թ. նոյեմբերին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են. 3-ը՝ Գեղարքունիքի մարզում, 2-ական՝ Շիրակի և Տավուշի մարզերում, 1-ական՝ Երևանում, Լոռվա և Կոտայքի մարզերում:

2007թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2500 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2007թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 6.0%-ով, իսկ 2006թ. նոյեմբերի համեմատ աճել՝ 34.3%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.7%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /37.5%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն